

8. ԽՈՐԹ ՄԱՅՐԸ

Կըլի, չի ըլի մե մարթ ինան մե կնիկ, կունեն մե ախճիգ, մե լաճ: Էտ մարթու կնիկը կըմեռնի, կէթա մե թազա կնիկ կըպերի:

Տար կնիկը ղաստեն կըխիվանդանա, ուր էրկան կասի.—Իմ սիրտս սիրտ ի ուզելըի:

Մարթը ինչի սիրտ կըպերի, կնիկը չի ուզի, կասի.—Քո լաճու սիրտը կուզեմ:

Էտ խեղճ մարթը էնքան կասի.—Ի՞չթարզ մորթեմ, ախ իմ հալալ տղա՞ս ի:

Կնիկը կասի.—Աղեկ ի:

Էտ կնիկը կըպերի տանց (քրոչ ինան ախպորը) տեմը պրնձե փլավ կըլցի, տանք կըզարմանան, որ խորթ մերը ուրենցը պրնձե փլավ ի տալըի, տանք կուտեն փլավը:

Մե ճընջուղ կըկա, ծառի վրան կընստի, հա՞ կասի.—ՃրՀվ, ճրՀվ, մե փչուր խաց տվե՛յ, ես ծեզի մե պարի խաբար ասեմ:

Ախպերը մե քթել պրինձ կըլցի ճնջղան տեմ, ճնջուղ կըվերցի կէթա, մե տըր էլ կըկա, էլ էնենց կասի: Ախպերը մե քթել էլ պրինձ կըլցի տեմը, ճնջուղը կըվերցի կէթա, մե տըր էլ կըկա, էլ էնենց կասի:

Ախպերն էս տըրը զատ չի թալի տեմը. տար քուր խասկցող կըլի, մե տըր էլ պրինձ կըթալի տեմը, ճնջուղը կասի.—Ծեր խեր-մեր տունը տանակ կըսրեն, որ ծերը սպանեն, ելեք փախե՛ք:

Տանք կըլեն, հա՞ կէթան:

Ախպերը չատ ծարավ կըլի, քուրը կասի.—Կառու ոտի տեղ մի՛ խմի, կըլես կառ, կելուն մի՛ խմի, կըլես կել:

Ախպերը կառու ոտի տեղի ճուրը կըխմի, կըլի կառ, կընի իր քրոչ իտևեն, հա՞ կէթա:

Մե թաքավորի լաճ կըտանի էտ ախճկան, կանի ուրը կնիկ:

Էտ խորթ մերն էլ կընի ախչարք, չուռ կըկա, որ տանցը գընի. կըկա թաքավորի պալատը, թաքավորի լաճուն կասի.—Ես իմ ախճիգ տանես եմ, տվե՛յ, թո՛ տանեմ, էլ պերեմ:

Էտ ախճիգ կասի.—Մի՛ տու տանի, իմ կլոխ կըթռչեցուցի։

Թաքավորի լաճ ախճիգ կըտա, կըտանի խորթ մերը, կըտանի կըթալի ճուրը, ուր սև ախճիգ կըպերի տեղը։

Թաքավորի լաճ կասի ախճկան.—Ընչի՞ էտենց սևցիր ես։

Կասի.—Էնքան արևի տեմ եմ մնացե՛։

Էտ ախճիգ մհում կըպռնի, որ էտ կառ մորթի։

Կառու քուրը ճրեն կասի ժամխարին, ժամխար կէթա ժամ, կըծենի.

—Վավ որ ուր ԱսվածՕ կըսիրի,

Թաքավորի լաճուն կասի,

Իմ կառնիկ ախպոր չըզինի։

Էտ ծենը կընի Թաքավորի լաճու անգաճը, կէթա, ուր կնիկ կըխանի ճրեն, կըպերի, խորթ մորն ինան ուր ախճկան կըկապի ծիան պոչին, տանցը կանեն կտոր-կտոր։

Երգընքեն իրեք խնձոր էչավ. մեկը՝ հաքաթ ասող Կրպուչին, էրկուսն էլ՝ կրող վարժապետին, մեյն էլ չըկա, որ տանք անգաճ տրողին։